տարագի քաղաքի նոր գերեզմանատանը զետեղվեց ծաղկեպսակ, անհայտ զոհերի Խաչքար-հուշարձանի առջև:

Կիրովական քաղաքում, Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, պատարագեց և քարոզեց Մայր Աթոռից հատուկ ժամանած Ս. Հռիփսիմե վանքի վանահայր Տ. Անանիա եպս. Արաբաջյանը: Հավարտ ս. պատարագի ծաղկեպսակ զետեղվեց երկրաշարժի զոհերի հուշարձանի առջև, որից հետո սրբազան հայրը այցելեց քաղաքի հոգեբանական հատուկ դպրոցի աշակերտներին և մխիթարեց նրանց:

Սպիտակում ս. պատարագ մատուցեց և քարոզեց Մայր Աթոռից ժամանած Տ. Սերովբե վրդ. Իսախանյանը: Ս. պատարագից հետո ծաղկեպսակ զետեղվեց զոհերի հուշարձանի առջև: Ապա հոգեշնորհ հայր սուրբը քաղաքամերձ Լեռնավան և Շենավան գյուղերում բացումը կատարեց և օրհնեց նոր քանդակված խաչքարերի:

Ստեփանավանի Ս. Սարգիս եկեղեցում ս. պատարագ մատուցեց և քարոզեց տեղի հոգևոր հովիվ Տ. Եղիա քահանան:

ՍՅՈՒՆՅԱՑ ԹԵՄՈՒՄ

Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանի հրավերով Սյունիք այցելեցին Մայր Աթոռի Քրիստոնեական Քարոզչության Կենտրոնի անդամները՝ մասնակցելու համար եկեղեցուն կից կիրակնօրյա դպրոցի բացման արարողությանը և մի շարք այլ հանդիսությունների: Այս առթիվ ուխտագնացություններ կազմակերպվեցին դեպի Գլաձորի, Նորավանքի, Սիսվանի, Տաթևի և Սուրբ Խաչ վանքերն ու եկեղեցիները:

Դեկտեմբերի 8-ին, շաբաթ օրը, Գորիսի գիշերօթիկ դպրոցում տեղի ունեցավ հավաքական մկրտություն: Մկրտվեցին ավելի քան 200 աշակերտներ, մեծ թվով ուսուցիչներ և ծնողներ: Թեմի առաջնորդ Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանը հանդես եկավ հավուր պատշաճի խոսքով՝ վեր հանելով մկրտության խորհուրդի իմաստն ու կարևորությունը:

Դեկտեմբերի 9-ին, կիրակի օրը, տեղի ունեցավ հոգեհանգստյան հանդիսավոր պաշտոն երկրաշարժի զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիրում՝ նախագահությամբ թեմական առաջնորդի: Սրտի խոսքով հանդես եկավ Տ. Աբել աղբ. Օղլուքյանը:

Նույն օրը, կեսօրվա ժամը 3-ին, տեղի ունեցավ եկեղեցուն կից Ս. Գրիգոր Տաթևացու անվան կիրակնօրյա դպրոցի բացումը: Ներկա էին քաղաքի մտավորական ներկայացուցիչներ, բազմաթիվ ուսուցիչներ: Բացման խոսքով հանդես եկավ Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանը, վեր հանելով Գորիսում կիրակնօրյա դպրոց հիմնելու կարևորությունը: Այնուհետև Հայ Եկեղեցու դերի ու նշանակության մասին խոսեցին Տ. Սեպուհ ծ. վարդապետն ու Տ. Աբել և Տ. Շնորհք աբեղաները: Աշակերտների հետ տեղի ունեցավ մտերմիկ զրույց: Վերջավորության աշակերտները սովորեցին իրենց առաջին դասը՝ «Հայր մեր»-ը, որի խմբովին արտասանությամբ էլ վերջացավ օրվա հանդիսությունը:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ